Հեռուներից արիւնի հոտ էր գալիս։ Լենինը, Ավնիւ դ'Օրլեանի իր բնակարանում, դաւում էր ամբողջ աշխարհի դէմ։ Վարը փողոցում հրձիգները աղմկելով վազում էին՝

Որովհետեւ վերջապէս, վերջապէս, վերջապէս —

Եւրոպան այրւում էր։

* * *

Եւ Լէնք Թիմուրը նստեց Կրեմլինում, սրբածայր գաւազանը իր ձեռքին։

«Ես Իոհան Թագաւոր»...

Եւ Ռուսաստանը թաւալ եկաւ։

Գրելու մեքենաները թիկթիկացին այրըուող քաղաքների մէջ եւ «Կապիտալը», բծաւոր տիֆոյի նման, խուժեց, աղբով եւ արիւնով լեցուն հիւանդանոցներից ներս։ Կուտակուած դիակների անչարժ աչտարակները նշան արին աշխարհներին ու վառեցին արիւնի փարոս։

Փորը հողին քսելով, դանակը ակռաների տակ սեղմած, չինացիների վայրագ խմբեր պաշարեցին օրը եւ պաշարեցին դիշերը ու եռացող սամավարների առջեւ նստած երաշխուն մտաւորականների աչքերի առջեւ ամբոխներով լեցուն արուարձանները օձերի գլուխ բարձրացրին։

Կենդանատար վագոնների մէջ՝ մինչ շոգեմեքենաները ցորեն էին վառում՝ Դոստոեվսկին, վերնստութեան դողով բռնուած, բոլոր անիծեալ հարցերը միանգամայն լուծեց։ Երկաթուղագծերի վրայից մահը վազեց ժամը հազար մղոն եւ մարքսիստական հաստատութիւնների կենտրոնացումը մուխերի մէջ վիրաւորուած գործարանները քամեց մաշուած սպունգների նման։

Ե՛ս, Իոհան Թագաւոր...

Այն տարին, ռուս քաջերը այրում էին Երեւանի բազարը, իսկ գերմանացի հրամանատարը լաց էր լինում Կաթողիկոսի առջեւ եւ իր ինքնաշարժի մէջ իբրեւ նուէր տանում էր հինգ չիչ էջմիածնի վաթսուն տարուան գինի։

Մոսկուան իր փայտէ տները այրում էր։ Լենինը իր գրիչը թաթախում էր կախուած եղբօր արիւնի մէջ եւ՝ Կրեմլինի բարձր բազկաթոռի վրայ նստած՝ ոտքերը օդի մէջ՝ հրամայում էր՝ «կողոպտել կողոպտողներին»։

Ե՛ս, Իոհան Թագաւոր...

Ահաւոր մի կապոյտ հաղ պատռում էր Թիմուր Խանի կոկորդը։ կեռ աւրերը իրենց ձեռքին՝ թաթար, մոնղոլ, սարտ եւ Թիւրքմէն, Բագուի համաժողովում, փառաբանում էին Լենինին եւ արիւնալի աչքերով նայում էին դէպի Հայաստան։

Համամարդկային երջանկութիւնը անօթի՝ սնանում էր հում դիակներով։ Տնտեսական դիտութեան վիտող թուանշանները արիւնի կարմիր գետերի մէջ մանր ձուկի պէս լողում էին, իսկ ժողովուրդը խոտ էր կրծում։

Ժողովուրդը, լքուած երախի նման տըխուր, Իկոնների առջեւ ծունկ էր չոքում եւ գետնախնձորի պաշար ժողովում։ Ժողովուրդը մեռնում էր բանտերում եւ հինաւուրց առասպելների առջեւ թաւալ էր գալիս, վիրաւորուած վիշապի նման։

Ե՛ս, Իոհան Թագաւոր...

Ու մի օր վերջապէս, գլխին զարկած եզան նման, ամբողջ Ռուսաստանը ոտքերը վեր տուաւ, աչքերը փակեց եւ մտաւ սպանդանոց։ Սոսկալի այդ Զիկագոն թիթեղէ տուփերում պատրանք դիզեց, բայց երբ միամիտները բաց արին, թարմ արիւնի հոտ եկաւ եւ որդերի չարանները գորշ ամպեր կազմեց խղճերի վրայ։

Մարդկանց չրթունքների վրայ մահը բանալի դրաւ, եւ միտքը պատպարուեց ատամոքսի տակ։ Երկինքը խենթացած անիւների վրայ ման եկաւ, եւ ատաղերը տրապեզների վրայ պարեցին։

Կուրանի սեւ հողերը վերջապէս պարարտ էին՝ ցորենը կարմիր էր բուսնում։ Իսկ Ախտայից մինչեւ Սեւան՝ լռութիւն եւ հովերի ովկեան։

Ե՛ս, Իոհան Թագաւոր...

Թիմուրը յոգնեց։ Զանձրացաւ։

Առաւօտեան դէմ, ժամը չորս եւ կէսին, երբ մոլլան դեռ դուրանը չէր բացած, երբ հեռաւոր երկրների ուխտաւորները դեռ ներս չէին մտած, երբ յախճապակէ մեդրեսէի ծուռ աշտարակների մէջ արեւը դեռ չէր կանգնած, Թիմուրը որոշեց մտնել գերեզման։

Ու ճիշդ այն ժամին, Իլիչը կաթուածահար եղաւ։

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան